Վաղ միջնադարյան տապանաքարերն ունեն մի քանի հիմնական ձևեր: ա) ուղղանկյունաձև, հասած խորանարդի տեսքի հիմնատակի վրա բարձրակունտ է երկփեղ, կտրվածքում եռանկյունաձև վերնամասը (նկ. 3): Վերնամասի հարավային երեսի վրա են որպես կանոն փորագրվել արձանազրուիյունները: բ) որպես այս ձևի ենթատիպ կարելի է առանձնացնել երկփեղ վերնամասի եւ հասած խորանարդաձև հիմնատակի միջակայքում ձևավորված աստիճանը, որը երկաստիճան զետեախարսի տեսք է հազորզում տապանաքարին (նկ. 2): Այս երկու տիպերը սովորաբար կերտված են միակտոր քարերից: գ) եռաստիճան զետեախարսիս հիշեցնող տապանաքարեր, որոնք ավարտվում են հարթ կտրած գագաթներով: Աշտարակ է, որ այս տիպի տապանաքարերը կազմված են երկու կտորից, որոնք կերտված են տարբեր զույնի տուֆից՝ կարծիր եւ սեւ: Ամենայն հավանականությամբ զույնային այս հակազրուիյունը, որը Հայաստանում փաստացրվել է Վազույն ժամանակներից, մարմնավորել է մահվան՝ սեւ եւ հարուիյան՝ կարծիր գաղափարը (նկ. 4):



Նկ. 2 Երկաստիճան, արձանազիր տապանաքար

էկեղեցիներն՝ Փարսի, Երերույց, Միժնուափեր, Էջմիածնի մայ տաճարի
Վնագույն որմնաքարերի վրա:

Տապանաքարերից երկուսն արձանագիր են: Դրանք եւան են Դլլինի վաղ
միջնադարյան տապանաքարերի մեկն, սինն էլ տառամուկերին: Վաղ միջնա-
դարի այս արձանագիր տապանաքարերը, անկնայն հաճանահանութեամբ,
թվագրված են Ս դարով՝ պահպանել են մաշտոցյան այբուբենով կատարված
առաջին երկաթագիր տառերի սնը: Դրանց ենթոս ենդում են հայ բարձրա-
տիճան հոգևորականներ կամ իշխաններ, որոնք հաճանաբար իրենց արձա-
նի հետքն են թողել մեր պատմութեան հուշումովս:

Սնկեղջուսի և պաշտական կառույցի միջակայքում իրականացված վաղ
միջնադարյան փերեախափի թաղումները՝ մտնելով մեծազանգված, հրանա-
լի մշակված արձանագիր տապանաքարերով, վկայում են, որ Ազգնի հուշա-
համալիրը միջնադարում եղել է համընդհանուր պաշտամունքի վայր, որանց
թաղվելը պատվարեր է համարվել նաև մեծատոհմիկների համար: Մեր կար-
ծիքով, հենց երանց տապանաքարերի վրա էլ քանդակվել են մարտադառա
Վնագույն արձանագրութունները և շրջանի մեջ ենթադրված հաճասարաթնի
խաչարանագանները:



Ընկ. 3 Վաղ միջնադարյան տապանաքարերից մեկի գծագիրը (նարտ.՝ և.
Քալանթարյան):

«Դանաստան»

2017 թ. իրականացված պեղումների արդյունքում բացահայտվեց
կաթողաչին մի կառույց՝ շուրջ 450 ք.մ մակերեսով: Ունի երկատարինան

ածամանակ: Այստեղ, պետք է որ իշխաններն իրենց հարգանքի տուրքը հաշտ պահանջներով ժառանգներին մատակցելու եկամ հաշտ մեծերը՝ նախարարները, հոգևոր եւ աշխարհիկ տերերը: Զի քաջազուգ՜ նաեւ, որ այն եղել է բարձրաստիճան հոգևոր առաջնորդի պետականաբար՜ գահազանչի՛նը:


Հարթաքանդակ աղյուսներ: Կառույցի պատերը ներքուստ, ամենայն հավանականությամբ, զարդարված են եղել տրպարինակ կաղապարներով պատրաստված՝ կենդանիների ու թռչունների բարդերաքանդակներով, թըրձած աղյուսներից ձևավորված ծոփորով: Աւամիկ ուշագրավ է այժմի հզոր ուսերով, սիրամարդի վերնապշով եւ երկար փետուրներով, գլխի եռակատար սթազով, զգին փաթաթված սասանկան մշակույթին բնորոշ արքայական ժածանվող ժողովներով էակի քանդակը: Հեքիաթային թռչնի առջև կատակերված է Կենսո ծառ խորհրդանշող մի թուփ՝ թզնուս բնորոշ տերեւներով, որի արմատներից սկզբնավորվում է ալիքաձև գիծ, որին, որոշ ընդմիջումով միանում են երեք այլ ալիքաձև գծեր, թիթևու, խորհրդանշելով շուր կամ զետ գաղափարը: Այստեղ, հավանաբար, կերպավորված է Ափոսայում հիշատակված Սիմուրգ կոչվող վիթխարի թռչնի հնագույն եւ անխորհրդանշակը, կամ հայ ժողովրդի հեքիաթներում սիրված հերոսի՝ Զերուխտ հավքի կամ Հազարան բյրույի պատկերը:

Գտնկերաքանդակ աղյուսներից նկատվող ծոփորով կառույցներից մեկի ինստրիբը զարդարելու տեսակետն առաջ է քաշվել տարիներ առաջ՝: Ասկայն այն զեռուս հիմնադրուկ էր, քանզի կոթողային հոգևոր շինությունները՝ նկնդկչին կամ զամբարանի երկրորդ հարկի, այժմ շարժականված, մատուցադրապատուհը ընդգծված աշխարհիկ՝ արքայական որսի կենդանիներով զարդարելն անհավանական էր: Այժմ, մեծաքանակ՝ մի քանի տասնյակ, պատկերազարդ աղյուսների հայտնաբերումը կոթողային կառույցի ներսում հիմնավորում է նախկինում առաջ քաշած վարկածը, միաստամանակ մատնանում նորարար շինության աշխարհիկ բնույթը: Կառույցի ներսում հայտնաբերված եզակի գաածոներից է նաեւ շարժական բուխարիկը՝ զարդարված Ծուց անտի տարածված ռելիեֆ-վերագիր, խոշազուխ քանդակներով (նկ. 6):

Հնագիտական գաածոներ: Հուշարձանի վերին հորիզոնների պնդումների որդյունքում հայտնաբերվել է վաղ, զարդարյալ եւ ուշ միջնադարի տասնյակ հարզարար գաածոներ՝ կավանաթներ, զարդեր, աշխատանքային գործիք-

¹ Հայ նախարարակառույցայն պատմաբան, | Ռատը, Եր., 2002, էջ 153-154; Հ. Սյունյան, 2011. Աղձիկի արքայական դամբարանի հուշարձանագրությունը (IV-XVII դդ.), - «Հուշարձան» տարեգիրք, Ռատը Ե, Եր., էջ 27:

ներ, գրամներ, զենքեր և այլն: Կազանոթների գերակշռող մասը բեկորային է և բաժանվում է 2 հիմնական խմբի՝ կենցաղային և շինարարական: Առանձին խումբ են կազմում ֆոներները:



Նկ. 6. Պայտական շինության ներսում հայտնաբերված խոյազույր գորգերով շարժական բախարինջ

Մեծաքանական խեցեղենում՝ կզմինեղրներ, շրտալուսներ, փողջակներ, թրժած աղյուսներ և այլն, առանձնահատուկ են աշխարհիկ թեմաներով՝ թռչուն, կենաց ծառ, սրբ կենդանիների և նետապնդող զազաններ և այլ տեսարաններ ներկայացնող հարթաքանց աղյուսները: Տիպորինակ աղյուսները պատրաստվել են հատուկ կաղապարներում և ներկայացնում են մեկ ասանյակի հասնող համանման պատկերաքանդակներ: Վերջին 3 տարիների պեղումների շնորհիվ հայտնաբերված հարթաքանդակներով աղյուսների քնդ-

հանուր քանակը աճելի քան 180 է, որոնցից 8-ը՝ 2015 թ., 32-ը՝ 2016 թ., 142-ը՝ 2017 թ. են ի հայտ եկել: Վերջին 142-ից 95-ը գտնվել են պալատի ներսում եւ զրա մերձակայքում՝ հյուսիսային գեոմոնոարիտի հարեանությամբ:

Անցազային կամուրջների հավաքածուն կազմված է հասարակ եւ շահարկապատ խեցեղենից: Հասարակ խեցեղենի դասին են պատկանում գանգան կարասներ, կնուճներ, կժերի, սափարիներ, թասեր, ջրեղանների, ափսեների, բնպանակների, տաշտերի, ձիթամրաղենի եւ այլ անոթների բնկույրերը: Մեղանի սպասքին են վերագրվում կենդանիների շանգակներով եւ խնջույքի տեսարաններով դանազարդ կարասները:

Հայտնաբերված շեռակապատ խեցեղենի թիվը հասնում է 4000-ի: Դրանք ունեն նկարազարդման տարբեր եղանակներ ու որակ, պատրաստված են գեղարվեստական բարձր ճաշակի ու մեծ վարպետության համազրույթյամբ: Առանկին խումբ են կազմում սելադոնից եւ բարձրորակ հախճապակուց պատրաստված անոթները, որոնք, թերեւ, երկրպէլ են Ջինաստանից եւ Պարսկաստանի նշանավոր խեցեղարձական կենտրոններից՝ Ինչից եւ Ասիականարագից:

Անվաճում եւ կրակաշարյուններ

Ի մի բնիկով նորահայտումները, կարող ենք վերակազմել արքայական հուշահամալիրի թաղաքաշինական պատկերը: Եւրո համալիրի հյուսիսային, բարձրագույր վաչրում, բնական ժայռի վրա, ջրխառնեութեանը պետականորեն ընդունելուց անմիջապէս հետո կառուցել են եռանկյուն հորինվածքով եկեղեցին: Ձի բացառվում, որ եկեղեցու հիմնարկումից անմիջապէս հետո կառուցվել է գեոմոնոարիտների վրա բարձրացող թառակող կոթողը՝ պակված թեւավոր խաշով: Դ գ. առաջին կեսին կառուցված եկեղեցու հարեանութեամբ, որա հարազային մասում, շուրջ 2 մ ջածրագույր տեղանքում, Դ գ. կեսին հիմնարկվել է արքայական զամբարանը: Պեղումները բացահայտեցին, որ ի հակադրութեան նախկինում արմատացած կարծիքի, այն չի եղել գեոմոնոարի կամ կրտսպեոնափոյր: Այդ ժամին մենք եշել էին գեոմոն 2011², Այժմ հստակ կարող ենք եշել, որ դեպք զամբարանի առաջին հարկ տարվելագույնս կարող էին տանել մեկ կամ երկու աստիճան, քանզի վաղ միջնազարդան, անկասկած արքայական զամբարանի հիմնարկումից տարիներ անց մաշտոցյան աշրտբների հայանագործումից եւ թարգմար վարպետների գրահանուլ գտնուելուց հետո, այն է արքայական զամբարանի կառուցումից

¹ Հուլիս 2002 թ. 15-16 հունիսի, 1 հատոր, էր., 2002, էջ 153-154:

² Հ. Միսնոյան, 2011. Այժմի արքայական զամբարանի եռաշարձանախոմբը (IV-XVII դդ.). «Հուշարձան» տարեգիրք, հատոր 17, էր., էջ 16-17:

Եկազագույնը 50-60 տարի անց, կարող էին հանդես գալ արձանագիր ասպունքաբերը: Մրանց մակարդակն արքայական զամբարանի սալահատանից բարձր է ընդամենը 30 սմ: Նկատենք, որ բուսն շենարարական գործունեության պայմաններում գետնի մակարդակը 50-60 տարիների ընթացքում կարող էր բարձրանալ արքայական զամբարանը կառուցելու ժամանակ եղած մակարդակից: Հետևաբար արքայական զամբարանի գետնափոր լինելու տեսակետը սրբազրգում է պեղումների և գիտաբերումների արդյունքում: Արքայական զամբարանն ի սկզբանե եղել է վերգետնյա կառույց, իսկ ցածրագիր դուռը ոչ թե ստորգետնյա շինության հետևանք է, այլ պայմանագործի է խոնարհման գաղափարով՝ շարաքանչուր ույցելու, զամբարան ժողովուրդ, իրենից անկախ պետք է խոնարհվեր հայոց արքաների ժողովրդներին: Արքայական զամբարանից գեպի հարավ ընկած հրապարակում կառուցվել է պալատը կամ տաշեփորգարանը:

Հողեփոր կառույցներով հարուստ Հայաստանում խիստ սակավաթիվ են մեզ հասած աշխարհիկ շինությունները: Հող միջնադարից ունենք ընդամենը շորս պալատական կառույց՝ Դվիներ, Արուհի, Ավանի և Զվարթնոցի կաթոլիկոսարաններն ու գտնակառու գահճիները: Մրանցից միայն Դվիներ պահան է հիմնարկվել 4-րդ դարում, մյուսները կառուցվել են 7-րդ դարում: Հող որում Դվիների հնագույն պալատը հիմնովին վերակառուցվել է արաբական տիրապետության տարիներին:

Ազգի ոգահարանը պետք է որ ժամանակակից լիներ հիշելնցուն, կամ, կառուցվեր անեմպոն արքայական զամբարանի հետ միասնամանակ: Զի կարելի բացասել նաև այն տարբերակը, որ այս հանդիսարանը գոյություն է ունեցել ամրոցի ներսում՝ նախքան արքայական անյունների վերափոխումը: Ենկեղնացու, արքայական զամբարանի և ոգահարանի միջակայքում հետագայում կառուցվել է բարձրաստիճան անձանց գերեզմանոցը: Կարող ենք փաստել, որ Ազգի հուշահամալիրը մեզ հասած վաղ միջնադարյան միակ հուշարձանն է՝ իր հստակ քաղաքաշինական կերպագործումով:

2017 թ. պեղումների արդյունքում Ազգում բացահայտված պալատական շինությունը, ըստ նախնական գիտաբերումների, կառուցվել է 7 դարում: Այս կոթողային շինության ստորին շերտերի պեղումները նախատեսվում է իրականացնել 2018 թ.: Դրանից հետո կարող ենք հիմնագործապես հաստատել կամ միտել մեր առաջ քաշած վարկածը՝ կառույցի ֆունկցիոնալ նշանակության և ժամանակաշրջանի վերաբերյալ:

Հայդար Բամառը և Հայկական հարցը

1921 թ. ամռանը Փարիզում անցրկեմկառայան հանրապետությունների և հյուսիսեվրոպայան շեռնականների վաարանգի զեկազարները խորհրդային իշխանության զեմ համառեղ պաղարելու հուշագիր ստարագրեցին¹: Ժամանակի ընթացում համագործակցության զաղափարն ավելի արգիական զարնամի և փորն արգեց այն անգափոխել զորննական զաա: 1926 թ-ից հոգիատի անկախության կամիտեն Փարիզում սեկեց հրատարակել «Պրոմեթեոս» ամսագիրը: «Պրոմեթեոս»-ի հիմնադիրներն էին վրացի մենշելիկ Նոյ Ռամիշվիլին, ազգային-զեմեկրաա Դեորգի Գվազազան, Ազրբեջանի ազգային-զեմեկրատական կուսակցության հիմնադիր Նուրուդ ըեկ Սուլթանոզը, հայանի պանթուրքիաա Մահմեդ էմին Ռատուլզազեն, Անանիանների հանրապետության արտաքին զորնների նախարար (1919-1920 թթ.) զաղասանցի Հայդար Բամառը: Ամսագրի պաառեական խմբագիրը Գ. Գվազազան էր²:

Մի շարք հանգամանքներով պայմանավորված «Պրոմեթեոս» ամսագրի շուրջ համահիմնված շարժումը զորննականում Հական հաազուկության շարժանագրեց: Անհաադուկության պառնառներից մեկն էլ կոգիաական վտարանգի զաղաառական զեկազարների կողմից հայ ժաղովրդի շահերի անանսումն էր: Թերևս զրանով էր պայմանավորված, որ ստարագրության մեջ հաստատված ՀՅԴ զեկազարությանը մերմեց միանալ պրոմեթեոսական շարժանը: հոգիաացի պրոմեթեոսականները շին ցունկանում ընդունել հայ ժաղովրդի իրափունքներն Արեմաայան Հայաստանի նկատմամբ: Դաշնակցականների համար մահուայից էր նան Նորհրդային Ռուսաստանի զեմ պաղարում Ռուրքիայի օգնությանն ազափնեկու մոտեցումը³:

1920-ական թվականների սկզբներին «Պրոմեթեոս»-ի հիմնադիրներից Հայդար Բամառը⁴ զուրս եկավ այդ կազմակերպությունից և 1924 թ. ստեղ-

¹ Кавказские Конфедерации в официальных документах таинной переписки и секретных документах движения "Прометей" (Сб. документов), Москва, 2012, с. 41-44.

² «Յուսարի», Գափիք, 1927, 17 Յուսիք:

³ Խ. Մանվանյան, «Պրոմեթեոս» շարժման հետ Հայ Յեղափոխական Դաշնակցության ոմեցամ անկուրքան հարցի շուրջ, «Հայոց պատմության հարցեր», հո. 13, Եր., 2012, էջ 226:

⁴ Հայդար Բամառը մեկել է 1889 թ. Դաղստանի Գափիք-Արմուկս գրեղում ռուսական ըանակի զեմեկրականը ընտանիցում, մահացել է 1965 թ. Փարիզում:

«եղ Վովկաս Նանգան ու համանուն խմբագրումը՝ Մյուս պրոմեթեոսահանները նույն թվականին կերպին Վովկասյան Համադաշնության Ուխտը (ազդրեշանցիների կողմից Ռաուուլ Ջազեն, Ալի Քոֆչիբաշիեզ հյուսիսկովկացիների կողմից Գիրնյ Մուսը, Իրահիմ Չուլիբը, Ռաուուսյիթան Շարմաեզ, վրացիների կողմից Նոյ Փարզանիտան և Ակակի Զիանկելիս)՝ Ուխտ մեզ տեղ էր հասկացված հուշերին, սակայն էՑ Դաշնակցությանը մերժեց անդամակցել Ուխտին, որովհետև հարեաններն, այնուամենայնիվ հայերի առաջադրած պայմանների հարցում զիջումների չգնացին»:

Այս ընթացքում ավելի պարզորոշ եղավ «Վովկաս խմբագրման զեկազար է. Բամասի գիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ: Դադասանցի տարագիր գործիչը պնդում էր, որ պետք է համակերպել ոչ միայն կովկասյան հանրապետությունների արտաքին սահմանների «STATUS QUO»-ի նետ, այլև վերացելի ներքին սահմանների»¹: Փաստորեն է. Բամասն Արեւմտյան Հայաստանի հարցը փակված էր համարում: Նա ոչ միայն դեմ էր Քուրբխայի ի սպուտ Հայաստանի հողային զիջումներին, այլև համոզում էր, որ իւրհրդային Ռուսաստանի դեմ պայքարում պետք է ապավինել Քուրբխայի աշակցությանը²: Ինչ վերաբերում է ներքին սահմանների վերացման առաջարկին, ապա դրանով է. Բամասը փորձ էր անում կանխել ներքին պատակտումը:

Հայերի կողմից պարբերաբար ճշեցվող Քուրբխայի հանգեղ ունեցած մտավարություններին է. Բամասը պատասխանում էր, որ առավել կարևոր է Վովկասի միասնակետությունը և համախմբված ձևով իւրհրդային Ռուսաստանի կործանմանը սպասելը, որպեսզի միացյալ կենտրոնական ուժերով հասնեն նաև Վովկասի անկախությունը³: Միաժամանակ նա փորձում էր համոզել, որ իր և իր համախոհների «Ֆրգտսիրական» հակումները Վովկասի ընդհանուր շահերին են ուղղված: է. Բամասի համոզմամբ՝ Վովկասը չի կորուրզ ապրել առանց որեւէ մեկի հովանավորությանը, այդ հովանավորը Քուրբխան է լինելու, որովհետև, ըստ է. Բամասի, Քուրբխան «երաշխագործում է Վովկասի անկախությունը: Իսկ հայերի և վրացիների «ռուսափրությունը»

¹ Զ. Աբրամով, Армянский вопрос в политической повести антивоветской эмиграционной организации «Кавказ» (1925-1930-е гг.) — Восток РАО (серия Гуманитарные и общественные науки), № 1 (10), с. 19.

² «ԼԵՄ», Փարիզ, 1934, № 4, էջ 126:

³ Ռեպրեն. կովկասյան օտարումը. — «Հայքենիք», Պետտում, 1937, ԼՄարտ, էջ 67:

⁴ «Սարազ», Փարիզ, 1936, 16 Դեկտեմբերի:

⁵ «Սարազ», 1936, 17 Դեկտեմբերի:

⁶ «Սարազ», 1936, 16 Դեկտեմբերի:

Վովկասը տանում է զեպի ռուսական սարկուսից՝ Փորձելով շահագործել Հ. Բամատի վերջին մտավարտությանը, որ ռուսական հովանավորությունն, ըստ էության, նշանակում էր կախում Ռուսաստանից՝ կարծում ենք առավել անընդունելի էր Թուրքիական հովանավորությամբ անկախ Վովկասի գոյության հանդեպ հավատը¹:

Հ. Բամատը պնդում է, որ Վովկասը կամ պետք է Ռուսաստանի մի զավառը լինի, կամ Թուրքիային հենված անկախ պետություն: Հատկանշական է, որ զազատանցի գործիչը քայքայում է երրորդ տարրերակը: Նա անհնաճեթ-ություն է համարում եւրոպական երկրներից աշակցություն ակնկալելու: Հասնրո՝ եթե նման հնարավորություն լինի էլ, զա երկար չի կարող տեսել, որովհետև Եւրոպան ի զորու չէ ապահովել Վովկասի անկախությունը միաժամանակ թե Ռուսաստանից, թե Թուրքիայից²: Ինչպես տեսնում ենք, Հ. Բամատը Վովկասի Թուրքիական արեւելմանը որեւէ այլընտրանք չի թողնում:

Անշուշտ, Հ. Բամատը չէր կարող շտեմելու և շուրջ շնորհունել հայկական մտավարտությունները: Մակայն իրականում նա ամեն զեով ձգտում էր Թուրքիային շահագործելու: Նրա համար զա կարեւոր էր նախեւառաջ վերջինիցս իրական աքակցություն ստանալու համար: Նրա համար գերխնդիրը ամեն զեով Ռուսաստանից անկախանալն էր:

Հ. Բամատի՝ Վովկասի ապագայի և Հայկական Տարցի հանդեպ ունեցած դիրքորոշումը խիստ քննադատության արժանացավ հայ քաղաքական գտարանդիության կողմից: Հատկապես զաշնակցական մամուլը պնդում էր, որ Հ. Բամատի դիրքորոշումը նախեւառաջ ծառայում է Թուրքիայի, և ոչ Վովկասի շահերին³:

Ավելյացնենք նաև, որ արդեն 1930-ականների վերջերին Թուրքիան նույնպես սկսեց չքաշալներել Հ. Բամատին: Մակայն Թուրքիայի այս կնեցվածքն ավելի շատ պայմանավորված էր ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները չքաշալացնելու մղումով:

¹ «Յառաջ», 1936, 17 դեկտեմբերի:

² Մեր կարծիքով, թերևս, Հ. Բամատի այս անթարուց քրքամտ դիրքորոշումով էր պայմանավորված Շանի առանկնց հազ-վրաքական միություն տեղեկելու փորձը (մամուրանց տես Խ, Մանթաճրանց, Հազ-վրաքական միության ստեղծման փորձ (1936 թ.), - ԲՀԱ, 2009, 8^{րդ} 2 (114, եր.), էջ 204-208):

³ «Յառաջ», 1936, 17 դեկտեմբերի:

⁴ «Յառաջ», 1934, 19, 24, 26, 29 Մայիսի, 1 Յունիսի, «Հարեմից», Պատուհ, 1926, 24 հեկտեմբեր:

**Վահարականությունն Ադրբեջանում. արտաքին կրոնական
ազդեցությունների դերը նոր ինքնությունների ձեւավորման հարցում
(1991-2008 թթ.)**

Վահարականությունը սուլաֆիականության¹ պլաշտֆորմի վրա ձեւավորված՝ սուլեհի իսլամի ամենապահպանողական ուղղություններից մեկն է, որը սկիզբ առավ 18-րդ դարում, Արարական թերակղզում՝ Նեջդում։ Նոր ուսմունքի քարոզիչը Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահհարն էր (1703-1752 թթ.)։ Արդեն 1930-ականների վերջերին վահարականությունը սկսեց ներթափանցել նաև Խորհրդային Միության տարածք, այդ թվում՝ Ազրբեջան։ Վահարականները ասելով նկատի են առնում այն հավատացյալները, ովքեր հետևում են բարեպաշտ նախնիների (սու-սուլաֆ սու-սուլի-հուն) օրինակելի վարքին։ Գաղափարախոսությունը մերժում է զտանգաժօր և անընդունելի ամեն տեսակի նորարարություն (բիդա), ինչը նրանք համարում են անհավատություն (թուֆր) և համարում են, որ ենթակա է մերժման «Ճշմարիտ ուղուց» շեղվելու զեպքում մահապատիժը գիտարկվում է օրինաչափ։

Նշենք, որ վահարականությունն ընկած է Մասուդյան Արարիայի Քաղափրություն (ՄԱՔ) պետական գաղափարախոսության հիմքում։ 1960-70-ականներից ֆինանսական արագընթաց և աննախագեղ հաջողությունները նպաստեցին, որպեսզի Մասուդյան Արարիան ռառը պատերազմի տարիներին և զրանից հետո գլխավորի ֆինանսական միջոցներ ներդնի՝

¹ Գաղափարական առումով սուլաֆիականությունը նկատի է առնում վերադարձ դեպի ակունքները, մասնավորապես իսլամի պատմության Մադիսուդի շրջանը (622-632 թթ.), կրթ մեւավորվեց Մուհամեդ ժողովրդի կողմից ղեկավարվող առաջին մուսուլ-թանական համայնքը՝ ուսման։ Սուլաֆիականությունը ճիշդ է ընդունում Նուրանը և սումման՝ Փեմ նշանակություն ստալով ամենի իսլամի հանքախական կրոնափրոսական ուղղությանը։ Իսլամի պատմության զերեք շուր ժամանակներում ի հայտ են եկել իսլամական կրոնական և կրոնաքաղաքական շարժումներ, որոնք կոչ են անել վերադառնալ վաղ իսլամի ակունքներին։ Հենց սուլաֆիականության դիրքերում էր կանգնած 18-րդ դարի արաբ կրոնական քարոզիչ Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահարը, որի ուսմունքը տարածվեց վահարականություն անվանումը։ Մանրամասն տե՛ս Ա. Բա-տաևեթ, *Пиритания ислама. Аккадима наук СССР, Институт исламов Азии. Москва: Из-ва. (1985).*

իրականացնելու վաճարականության արտահանումը՝ որպես առիթ բռնել՝ նպատակադրվելով իրավո՞ր այդ ուղղությու՞նը զարմնե՞լ առաջատար ու՞մ թե՛ իրլամական աշխարհում, թե՛ նրա սահմաններից զուրու։ Այս ճանաչարհով Մաուլզյան Արարիան ցանկանում էր առաջին հերթին հակազդել իրլամական աշխարհում նրանի իրլամական Հանրապետության շրջափական ազդեցության տարածմանը։ Վաճարական քարոզչության (զավու) գրանւորումներից են սաուդական կրթական հաստատություններում երթառարաց մուսուլմանների ուսումնառության կազմակերպումը, աշխարհի տարբեր երկրներում մզկիթների շինարարությունը, իրլամական կենտրոնների ստեղծումը՝ վաճարական քարոզիչներին ներգրավմամբ։ Երկկալումս վաճարականությունը մի կողմից Մաուլզյան Արարիայի կողմից ֆինանսավորվող միջազգային տարաբնույթ, այդ թվում՝ բարեգործական, կառույցների գաղափարական հենքն է, մյուս կողմից՝ վաճարականությունը անդրազգային եւ գլոբալ կրոնական ուղղություն է, որից սեղմ են ոչ միայն կրոնական, այլև կրոնաքաղաքական եւ սազմաքաղաքական քաղձաթիղ կազմակերպություններ։ Վաճարականությունը շատ զեւպերում նույնացվել է ծայրահեղականության, մոլեկրոնության եւ աճարեկլություն հետ։

Վաճարականությունը, որը գաղափարական առումով երբ երևույթ էր Ազրբեյջանի համար¹, ավելի պիտիվ ձևով սկսեց Ազրբեյջան երթափանցել արգիև անկախությունից հետո 1990-ականների սկզբին հիմնականում Ղարաբաղյան պատերազմի (1991-1994 թթ.), ուսուչիչնական պատերազմների (1994-1995 թթ., 1999 թ.) արգյունքում, սուներ-սալաֆիական քարոզիչներին, Ազրբեյջանում հաստատված շեյխե փախուսականների, ինչպես նաև Մաուլզյան Արարիայում, Մոսկի երկրներում եւ իրլամական այլ պետություններում կրթություն ստացած ազրբեյջանցի ուսանողների միչոցով։ Ազրբեյջանի հյուսիսային շրջաններում վաճարականության ներթափանցմանը նպաստեց Դազասանի հետ Ազրբեյջանի սահմանը, որը տարանցիկ ճանապարհ գարևով թե՛ վաճարական քարոզիչներին, թե՛ վաճարական գաղափարներով տողորված մարանչոց իրլամիզմի մարտիկների համար։ 1995 թ.-ից ի վեր վաճարականության աշխարհագրությունն Ազրբեյջանում ընդլայնվեց՝ աստիճանաբար երթառելով Բաքու եւ նրա շրջակայքը։ Փարոզչության կարիւր քաղկացուցիչներից էր վաճարականության գրականության տարածումը։ կրոնական այս երթ ուղղություն

¹ S.N. A. Vallyev, The Rise of Salafi Islam in Azerbaijan (2005), Tameem Monitor 3 (13).
270

աճելի մեծ հաջողությունների էր հասնում սոցիալապես անապահով շրջաններում:

2000-2001 թթ. Ազրբեջանում հաստատված շուրջ 10.000 շեշեն փախտակների մի զգալի մասը փահաբահան գաղտփարների կրողներ էին: Նրանցից շատերը սովորություն ունեին ազդեցիկ լեզգիական մզկիթում Պատահական չէ, որ Ազրբեջանի Հանրապետության բազմաթիվ քաղաքացիներ մասնակցել են ռուս-շեշենական պատերազմին՝ անդամագրվելով փահաբահան ուղղվածություն չեշենական և զազասանյան ռազմաքաղաքական կառույցներին: Այս իրողությունը մտահոգում էր Ազրբեջանի իշխանություններին, քանի որ մարտելող իսլամիզը կարող էր մուտք գործել նաև Ազրբեջան:

2001 թ. հոկտեմբերին Ազրբեջանի ազգային անվտանգության ետխորարը հայտարարեց, որ շուրջ 300 ազրբեջանցիներ ռազմական պատրաստվածություն են անցել Չեչենիայի և Դաղստանի փահաբահան ճամբարներում: 2003 թ. օգոստոսին Ազրբեջանի անվտանգության ուժերը հերքակալեցին «Հորաբաղյան դարսիզաններ» անունով 23 հոգանոց մի խմբի, որի անդամները մարտելել էին Չեչենիայում և պատրաստվում էին կռվել Լեռնային Հորաբաղի դեմ: 2003 թ. իշխանությունները հայտարարեցին, որ 2001-2003 թթ. Ազրբեջանում ձերբակալվել են 70 փահաբահաններ, որոնցից նվազագույնը 45-ը Պանկիսի կիրճում շեշենների հետ կռվել էին ռուսական բանակի դեմ¹:

1993 թ.-ից Ազրբեջանում սկսեցին հիմնվել սաուդական հովանավորությամբ գործող ժալամական աշխարհի լիզային² մասնաճյուղեր, որոնք օժանդակում էին փախտակալներին, զեղծաբայք բաժանում, օգնում որբանոցներին և այլն: Կենտրոն քարեզործական կառույցներ՝ զրտեք նաև կրտնաքաղաքական քարոզչության օչակներ էին: Ազրբեջանում փահաբահանություն և ուղղվածություն ամենազործուն կառույցներից մեկը եղել է

¹ International Crisis Group (2008) Azerbaijan. Independent Islam and the State. ICG Europe Report 191.

² Կոլեկտիվ:

³ Իսլամական աշխարհի լիզային (արաբերեն՝ ալ-Մաջիստա ալ-Պլամ ալ-Իսլամի) հիմնվել է 1962 թ. Մեքքայում, մատղամ Ալաբիայի թագավոր Ֆեյսալ իբն Աբդ Ալ-Ալի-զե (1964-1975 թթ.) կողմից՝ որպես ոչկառավարական անդրազգային կազմակերպության՝ հակազդելու արաբական աշխարհիկ ազգայնականության ամեն: Կազմակերպության նպատակն էր իսլամի տարածումն է, իսլամական քարոզչության իրականացումը, բարեօրոշությունը և այլն: Կազմված է ութ հիմնական ճյուղերից: Առաջնապես փնմանավորվում է մատղամ Ալաբիայի կողմը:

բուլղեթական ծագմամբ Իսլամական վերածննդի ժառանգության կազմակերպության ազդրեչանական մասնաճյուղը, որը հիմնվեց 1990-ականների առաջին կեսին: Նրա գործունեությունն արգելվեց 2001 թ., երբ կազմակերպության աֆղտանական և պակիստանյան անդամները մեղադրվեցին «ալ-Վաիդայի» հետ կապեր ունենալու մեջ: Կազմակերպությունն Ազդրեչանում վերանորոգել է 62 մզկիթ, որոնցից՝ կենտրոնական շրջաններում՝ 39, հյուսիսային շրջաններում՝ 17, մայրաքաղաքում՝ 4¹:

2002 թ. մայիսին Ազդրեչանի ազգային տեղաբնակչության փոխնախարար Քոֆիթ Բարտեւը հայտարարեց, որ արարական մի շարք երկրներ հետաքրքրված են եղել Ազդրեչանում իսլամական արմատական պազափարիների տարածմամբ՝ այն իրականացնելով ակտիվիստներին ֆինանսական օժանդակություն ցույց տալով և ռազմական համընթացում ազդրեչանյի զինյալներ պատրաստելով²:

2005 թ. նոյեմբերին Ազդրեչանի խորհրդարանական ընտրություններին նախորդին իշխանություններն ավելի ու ավելի շատ էին խոսում այն մասին, որ վաճառականությունը վտանգ է ներկայացնում Ազդրեչանի քաղաքական կայունությունը: Նախորդին Ասիայի մուսուլմանների Բուլղեթի հանձնախմբի (Ազդրեչանում այն գործել է 1995 թ.-ից) կողմից Կովկասի մուսուլմանների վարչության անունով Բաբու էր առաջվել ուղղերեն, զազախերեն, արաբերեն, ազդրեչաներեն և ուսուրեն լեզուներով 14 տունա (իսկ գրանից առաջ՝ 10 տունա) կրթական գրականություն: Իշխանություններն արգելել էին գրքերի տարածումը՝ պատճառաբանելով, որ գրանց մեջ բաց ձևով քարոզվում էր վաճառականությունը, հակազդվում էին իսլամի շիա և սուննի ուղղությունները³:

Թն՝ պետություն և թե՛ շիա հոգևորականության քարոզչության արգելումը վաճառականների նկատմամբ հասարակության մեջ ձեռագործից բացասական կարծիք: Իրենց հերթին վաճառականները, ովքեր իրենց համարում էին սուննի համայնքի անդամ, իշխանություններին մեղադրեցին ժայռահեղափոխությունների, մարտնչոգ իսլամիստների և ճշմարիտ հավատացյալների հետ շփոթելու, բնակչության մեջ երանց նկատմամբ վախի մթնոլորտ ստեղծելու և վարկաբեկելու մեջ: Արդեն 2007 թ. սեպտեմբերին Հիդայեթ Օրուչեւը՝ Կրթական կազմակերպությունների հետ աշխատանքի

¹ International Crisis Group (2006), Ընցման ճանապարհ:

² Ա. Փաշալյան, Իսլամը Ազդրեչանում, անցյալը և ներկայից, Եր., 2014, էջ 111:

³ Azerbaijan Does Not Pose A Threat? (by Liz Fudge, Radio Free Europe, <http://www.rferl.org> (07.08.2005), հասանելի է՝ 07.12. 2018:

պեճակն հանձնաժողովի նախագահը, հայտարարեց, որ վահարակահուսթյունը չուրջ վտանգ չի ներկայացնում Ազրբեյջանի համար և նպատակահարմար չէ գրա արգելումը¹:

2008 թ. Ազրբեյջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Թամիզ Մեհմեդը վերահաստատեց, որ իրենք չեն պատրաստվում արգելել վահարակահուսթյունը, բայց եթե որևէ զավանանքի ներկայացուցիչներ կգործեն ծայրահեղականության գիրքերից, նրանք կկանգնեն օրենքի սուալը²:

Հարկ է նկատի ունենալ, որ մինչև 2008 թ. Ազրբեյջանում գործել է վահարակահուսթյունի հիմնական ուղղություն՝ ապոքալոգաական ու ալաուազմական (որ մեծամասնություն էր կազմում) և ուղղա-քաղաքական կամ շիհադական: Ազրբեյջանում վահարակահուսթյունի քարոզիչները և իմամները, մասնավորապես նրանք, ովքեր առանել են Մադինայի իսլամական համալսարանում (Մաուդյան Արաբիա), զգալիորեն ազդել էին սուուզական վահարակահուսթյունի պահպանողական կրոնական քարոզիչներին, որոնցից էր նույն համալսարանի պրոֆեսոր, սուուզական իշխանությունների ամենահազմադասարժան մարդկանցից մեկը՝ Թարիա բին Հադի Ալ-Մադինային՝ մադիալիականության հիմնադիրը³:

Հարկ է նկատի ունենալ, որ վահարակահուսթյունի ընդլայնմանը զուգահեռ՝ Ազրբեյջանում կային գրա օտարածմանը խոչընդոտող պատժառանքներ: Մասնավորապես՝ այդ երկրում իսլամի շիա ուղղության գերակայությունը, սուուների իսլամի ոչ միանշանակ կամ քաջոսական վերաբերմունքը շիալականության և օժողովրդական իսլամին նկատմամբ, ինչպես նաև վահարակահուսթյունի կազմը կրոնական ծայրահեղականության և պահպանողականության հետ:

Հետանկախության շրջանում Ազրբեյջանում հազմաքանակ ինքնության գերակայությունը այդ ընկած իսլամական համայնքներից հասկապես հեռաքրքրություն է ներկայացնում մեր կողմից արգեն հիշատակված Արու Բաբբ մզկիթի (Յու Եոկե տասիժ) համայնքը: Արու Բաբբ մզկիթի իմամը՝ Քամիթ Սուլեյմանովը, ուսանել էր Մաուդյան Արաբիայի Մեդինայի մի-

¹ Председателя комитета Азербайджан не намерен запрещать хакапатизм на территории страны, <http://www.trend.az> (27.09. 2007), հասանելի է՝ 07.12. 2018:

² P. Мехмедов, Хакапатизм в Азербайджане запрещать не будет, <http://www.kavkaz-info.ru> (29.04. 2008), հասանելի է՝ 07.12. 2008, հասանելի է՝ 07.12. 2018:

³ Մանրաճամ տի՛ս R. Meijer, (2009) Global Salafist Islam's New Religious Movement, New York: Columbia University Press.

չազգային իրաժամական համայնարանում: Վերագտանալով Ազրբեյջան եւ պաշտոնավարելով որպես իմամ՝ Ք. Սուլեյմանովին հաջողվեց համախոսների լայն շրջանակ ստեղծել՝ քարոզչությունից բացի մեծ նշանակություն ստեղծեց նաեւ սոցիալական ուղղությունը: Վերջինս սակայն արդեն մզկիթի նախկին իմամ է: Արու Բաքր մզկիթը փակվեց 2008 թ. օգոստոսին:

1997 թ. քուլվեյթի մեծահարուստ Մուհամեդ իբն Բուլեյան Բուլանդյան վերածննդի ժառանգության քուլվեյթական կազմակերպության անունից Բաքվի Նորիմանով թաղամասում հովանավորեց իր մեծուքյամբ եւ նարատրապետությանը առանձնացող Արու Բաքր՝ մզկիթի կառուցումը: 1998 թ. մարտին Արու Բաքր մզկիթի համայնքը, որի հիմնադիրները՝ ստանուլեն էին՝ թե՛ սուներներ, թե՛ շիաներ, գրանցվեց արգարազատության նախարարությունում: 1998 թ., առանց կոփառի ժուռուլմանների վարչության հովանության, Փամիթ Սուլեյմանովը համայնքի կազմից օրինական ճանապարհով ընտրվեց Արու Բաքր մզկիթի, որ նույնն է թե՛ համայնքի իմամ՝:

Արու Բաքր մզկիթի համայնքն իրեն համարում էր ահլ ալ-սուննա վա ալ-շամաա (Әһл Сүннәт вәл Հәмәә), այսինքն՝ սուների իսլամի հետևորդ: Սուլեյմանովի հեղինակության շնորհիվ Արու Բաքրը, որն Ազրբեյջանի ամենամեծ սուննիական մզկիթն էր, գարնամ սուննիականության կենտրոնը ի տարբերության անզական ովելի փարք մզկիթների, Արու Բաքրը կարող էր անկախորեն 7000-10,000 հավատացյալի¹: Ուրբաթ եւ տան օրերի հավատացյալները հավաքվում էին մզկիթի բակում եւ հարակից տարածքում: Մզկիթի գործունեությունը Բաքվի ընդգծված աշխարհիկ քաղաքային ճշակույթի մեջ ստեղծեց որոշակի իսլամական մթնոլորտ: Կարճ ժամանակահատվածում մզկիթը, շնայած սուննիական (կամ վահաբական) ուղղվածությանը, մեծ ճանաչում մեղք բերեց: Փամիթ Սուլեյմանովն իր

¹ Մզկիթն անվանակոչվել է ի պատիվ Մուսամմի մարգարեի գննանցն եւ ստացնց արգարաջառ իսլամիս Արու Բաքր Ան-Սիդդիկի (632-634թթ.), որն զուտը իսլամ մարգարեն ամուսնացած էր:

² Նշենք, որ Ազրբեյջանում կրոնական որևէ կառույցի հիմնադրումն իմաստ ունի շրջանում անհրաժեշտ էր հիմնադրվելի խոսք:

³ R. Sattarov, (2010) Islam as Political Factor in post-Soviet Azerbaijan, Central Asia and the Caucasus, Journal of Social and Political Studies, No. 4/28/ 2004, p. 187-188.

⁴ Azerbaijan: "Atheistic Islam" Takes Several Forms (by L. Fuller), <http://www.afesl.org> (10.08. 2007), հասանելի է՝ 07.12.2018:

հարցազրույցներից մեկում նշում էր, որ առաջին անգամ, երբ 1998 թ. ազոթում էին, հրուսե մարդ էր ներկա, իսկ երեք տարի անց՝ հինգ հազար¹:

Արու Բաքբ ձգկիթը Ազրբեյջանի սուներական կրոնական ժշակույթի մեջ ներդրեց ուրբաթօրյա կրոնական քարոզը՝ խուտրան: Ազրբեյջանում խուտբի ազատություն քաղաքացիական պայմաններում մզկիթները սկսեցին քաղաքական անկումի գեր կատարել: Արու Բաքբի հաշտության պատճառներից մեկը Քամեթ Սուլեյմանովի հետադարձական ծրագրն էր, աստվածաբանական պատրաստվածությունն ու արտերենի իմացությունը: Մզկիթ հանախոզների մեջ շատ էին երիտասարդ եւ կրթված մարդիկ, այդ թվում՝ ուսուսիրտներ, նաև՝ կանայք, ովքեր մզկիթ հանախոջուն գուպահն՝ շատ զեպքերում ուսումնասիրում էին նաև արարերեն, Դուրան, հանախոջուն եւ այլն: Վահարականության բնույթը գեերից մեկը քարոզների մատչելիությունն էր, պարզությունը, համատաղյալներին միազորող համայնքի գաղափարը, որտեղ բոլորը հավատար էին եւ պատրաստ օգնել ու սատարել միմյանց, հոգեւոր արժեքների գերակայությունը ելուսականի եկամամբ, ինչը գրավել էր գործնում կրոնական այս նոր ուղղությունը ունկախությունից հետո սոցիալական խնդիրների մեջ հայտնված ազրբեյջանական հասարակության որոշ շերտերի համար: Վահարականության շեշտադրամբ սուների իսլամն արաց տարածվում էր երիտասարդության շրջանում: Ավելանում էին սուներական մզկիթները: 2005 թ. արգբեյջանական հրապարակումներից մեկում նշված էր, որ միայն Բաքբում վահարականների թիվը 15,000-ի էր հասնում²: Շրջանառվում էին այլ՝ շատ ավելի բարձր թվեր եւս:

Ազրբեյջանում վահարականները շատ զեպքերում քննադատում էին Ազրբեյջանի իշխանություններին: Սակայն Ք. Սուլեյմանովն անկամբ շրջանցում էր քաղաքական խնդիրները³: Նա փորձում էր խուսափել կոմկատի մուսուլմանների վարչության եւ մասնավորապես Փաշալագեի հետ առճակատումից եւս: Սուլեյմանովին նույնիսկ հաշտողից շահել պաշտոնական հոգեւորականների աջակցությունը: Բաքբի իսլամական համալ-

¹ Worshiping in the Cross Hairs (by Shabla Sultanova). Transitions Online magazine (07.08.2012), հասանելի է՝ 07.12.2018:

² Մամբախախտ սեմ'ս Ա. Վալիյեւ, (2005) The Rise of Salafi Islam in Azerbaijan, Terrorism Monitor 3 (13).

³ S. Bedford, (2009) Islamic Activism in Azerbaijan: Repression and Mobilization in a Post-Soviet Context. Doctoral Thesis. Stockholm University, pp. 120-122.

սարանի ունկնույր Սարիբ Հասանլին Սուլեյմանովին քնուկազրեց սրպնս սկրթված, երիտասարդ ու խոստումնալից կազրս¹:

Իրենց հերթին, իշխանութիւնները տւեննիական մզկիթները համարում էին արմատական ու ծայրահեղական գաղափարների տարածման եւ ազրրեղանցի երիտասարդների հավաքազրման հարթակներ: Ազրրեղանուս պետական մակարդակով իրականացվում էր հակասուննիական քարոզչութիւն: Վահարականներին հնտապնզում էին: Սղեւ եւ զիպրեր, էրր ստիկանները թոնի սափրել եւ նրանց մարոքը: Ազրրեղանցիներից շատերը վահարականներին թազրանքով անվանում էին մարուքավորներ (սաէկոլլար) կամ սեւամարուսներ (ջարասաէկոլլար): Հասկանշական է, որ Արու Բաքրը նուկնպես զերծ շմնաց պետական հնտապնզումներից: Ոստիկանութիւնը հնտապնզում էր այն մարզիանց, սվքեր մզկիթ էին հանախում, կրսնական գրականութիւն ունեին, խմրակներում արաբերեն էին պարապում եւ այլն²:

2008 թ. օգոստոսի 17-ին Արու Բաքր մզկիթում իրականացվեց ահարեկչութիւն, որի հնտեւանքով մահացավ երկու մարզ, տասնից ավելին վիրավորվեցին: Ահարեկչութիւն կազմակերպման մեղ պետութիւնը մեղավոր էանանց սնտատային յերայրներս անունով սազմա-գաղաքական ծայրահեղական մի խմրավորման, որի հնտ կապ ունեցող մոտ երեք տասնակ մարզիկ դատապարտվեցին³: Չնաշմ երկարատեւ դատական գործընթացին, մզկիթն աչրզնս էլ շրացվեց՝ համայնքի անդամների, մզկիթ աչցեկոզների եւ շրչակայքում աչրոզ թնակիչների համար անվտանգ շինելու: Հիմնավորմամբ: Արու Բաքր մզկիթ աչցեկոզները սկսեցին ազսթել սահաֆիական ուղղվածութիւնը աչլ մզկիթներում:

Արու Բաքր մզկիթի փակումը, քաս էութիւն, պետութիւն շահերից էր թիտում: Մզկիթի եւ նրա շուրջը ձեւավորված հավասացիւյների հարաձան թիվը մտահոգի էր իշխանութիւնների համար: Փամեթ Սուլեյմանովը մեկ անգամ շէ, որ փորհեղ էր պարզարանել իր եւ համայնքի գաղափարական ուղղվածութիւնը՝ նշելով, որ իրենց պետք է զիտարեկեղ ոչ թն վահարականներ, աչլ տւեննիներ կամ սեղմարիտ խայմիտ հնտեւորզիներ: Ք. Սուլեյ-

¹ R. Sattarov, (2010) Islamic Revival and Islamic Activism in Post-Soviet Azerbaijan: 146-211. Radical Islam in the Former Soviet Union /ed. Galina Yemefianova/. Routledge, London, p. 188.

² Worshiping in the Cross Hairs (by Shahla Sultanova). Transactions Onkno magazine (07.08. 2012), <http://www.onkno.org> 07.12.2018:

³ Alleged Islamic insurgents on trial in Azerbaijan, <http://www.refworld.org> (12.02. 2010).

մանովը ժամանակ առ ժամանակ քննադատում էր իսլամի անվան ներքո իրականացվող ահաբեկչությունը: Մյուս կողմից, ես համոզված էր, որ հաճախացյալներին պետք է հետապնդել, քանի որ դա կարող է հակառակ եշտանակությունը ունենալ եւ արմատականացնել նրանց գիրքերը¹:

Այսպիսով, 1991 թ. անկախությունից հետո Ազրբեջանում սկիզբ առած իսլամական շարժումը խթանվեց մի կողմից՝ արտաքին կրոնական ազդեցությունների շնորհիվ, մյուս կողմից՝ դա ներքին գործընթացների ու խմբումների արդունք էր: Ազրբեջանում սկսեցին տարածում գտնել իսլամական եւր հոսանքներ, որոնք մինչ այդ անձանոթ էին երկրին, ինչպես, օրվահարականությունը: Իսլամական վերածննդի համար նպաստավոր եղան Ազրբեջանում առկա սոցիալական, տնտեսական եւ քաղաքական խնդիրները: Մատուցյան Աբարիայից եւ այլ շրջաններից Ազրբեջան ներմուծված սուլունի իսլամի վահարական ուղղությունը նպաստեց կրոնական եւր ինքնություն ունեցող սոցիալական հանրույթների ձեւավորմանը՝ հարստացնելով Ազրբեջանի կրոնական խճանկարը: Արդյունքում, ի հայտ եկան գլխաշորով ազդիկներ եւ կանայք, մեծացավ հետաքրքրությունը իսլամի նկատմամբ, ընդլայնվեցին իսլամական գիտելիքի շրջանակները, իսլամական արժեքներն ու կենսակերպն աստիճանաբար մուտք գործեցին Ազրբեջանի հիմնականում աշխարհիկ հասարակություն:

Բնականորաբ, Ազրբեջանի իշխանությունների մտահոգում էր իսլամական գործոնի ակտիվացումը Ազրբեջանի հասարակական կյանքում: Մասնավորապես վահարական ժողովուրդներով առանձնացող սուլունիական համայնքի հարածան ակտիվացումը գիտարկվում էր սպասելիք ազգային անվտանգությունը: Արդեն Հեյդար Ալիևի, իսկ հետագայում Իլհամ Ալիևի օրոք, իշխանությունները կոշտ մեթոդներով կասեցրեցին Ազրբեջանում վահարականության հետագա ընդլայնումը:

¹ Նույն տեղում:

Պավել Գորանյանի մասին

(Յիշատակի խոսք)

Հարգելի՛ գործընկերներ, բարեկամներ:

Քույլ սովեր Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կազմում գործող Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կոնկրետի անունից բարիս շնորհավորել այս գիտաժողովի բացման կապակցությամբ, մի գիտաժողովի, որը նվիրված է ռազմավարական պատմաքաղաքագիտական հետազոտությունների զարգացի հիմնադիրներից մեկի՝ ականավոր գիտնական, պրոֆեսոր Պավել Աշոտի Զորանյանի հիշատակին: Զգայի շափով հենց երա շանքերի շնորհիվ է ձևավորվել մեր երկրի համար գիտելիքների այդ նոր բնագավառը, այն է՝ ազգային ու միջազգային անվտանգության քաղաքագիտության պատմական-պատմաքաղաքական պրոբլեմների ռազմավարական հետազոտությունների ոլորտը:

Դատելով մեր Գիտաժողովի կարգից ու երա մասնակիցների կազմից՝ սա ես մեկ կարեւոր եւ նշանակալից իրադարձություն է, որը կարող է նոր հզոր ստեղծագործական ազգակ հազորգել մեր հայրենական գիտության զարգացմանը, ժամանակակից պատմաքաղաքական ու պատմաքաղաքագիտական հետազոտություններին, որոնք ավելի կիրառյուն են Հայաստանի եւ միջազգային գիտական հանրության հասարակագիտական զարգացման միջնու գիտահետազոտական կապերը:

Հարավային Չեխոսլովակիայում եւ շրջապատող տարածաշրջանում ազգային ու միջազգային անվտանգության պրոբլեմների միջգիտանյութային պատմաքաղաքագիտական կազմերի մշակումը, որը Պավել Զորանյանը կատարել է մեր կոնկրետի կազմում, վկայում է, որ ես ժամանակակից քաղաքական գիտության համաշխարհային նվաճումների համահարսում մեր հայրենական գիտության մեջ ներթերել է դրա ռազմավարական բուժնի ձևավորման նկատմամբ արակապես նոր մոտեցումներ:

Պրոֆեսոր Զորանյանը, բացի այն, որ եղել է Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի մի շարք կոնկրետիվ մենագրությունների պատրաստման գիտական ղեկավարը, ինստիտուտի անունից հաշտություններ է կապերել է ունեցել մեծ թվով միջազգային կոնգրեսներ:

րում, գիտաժողովներում, սիմպոզիումներում՝ հանդես գալով մասնագիտական բարձր մակարդակի գիտական զեկուլցումներով և հազարգույններով:

Հայաստանի պաշտպանության նախարարության Ազգային ազդեցմամբ հետազոտությունների ինստիտուտի ստեղծման որից ի վեր պրոֆեսոր Չորանյանը 10 տարի շարունակ աշխատել է Տաբատաշչյանային վերլուծությունների ազդեցմամբ հենարանում որպես ավագ գիտնական-վերլուծաբան: Իր քեղծնախագիտական աշխատանքի տարիներին ես եղել է նրկու հիմնարար կուլեկտիվ պատմաքաղաքագիտական մեթոդությունների գիտական զեկուլցար: Գրանք «Նուշիի քեկումներ» և «Արցախ-Ֆուզվրդպարության և սեղանվտակարգի հիմնախնդրները ԱՀ տեվտանցության համատեքստում» քեկումներով աղբյուրագիտական հետազոտություններն են: Նրկու աշխատություններում էլ բյուլանդական, արարական, պարսկական, վրացական և ռուսական սկզբնաղբյուրների հիման վրա համակարգված էելով ներկայացվում է ՕԼ-ՕԽ գարերի Արցախի քաղաքական պատմության ազդեցմամբ միջգիտաճյուղային վերլուծությունը:

Իր աշխատություններով պրոֆեսոր Չորանյանը, զեկուլցարելով հարուստ փաստաթղթային-փաստագրական հիմքի վրա կատարված Արցախի հայկական պետականության պատմության պրոբլեմները ազդեցմամբ պատմաքաղաքագիտական հետազոտությունները, հարստացրել է գիտական էլմարություն հաստատման և Հարավային Կովկասի պատմության՝ քաղաքականացնա շահագրգռված որոշ պատմաբանների էեևարկած կեղծարարությունների հերքման հիմնարար ու գիտակիրտական հիմքերը:

Իրա հեա մեկտեղ տեղեհատելի է պրոֆեսոր Չորանյանի ներգրումը Հայաստանի պաշտպանական համակարգում քաղաքական գիտությունների գծով զեկուլցարական ասեևախոսությունների պաշտպանության առաջին մասնագիտական խորհրդի ստեղծման գործում: 2009-2017 թթ. եա եղել է Ազգային ազդեցմամբ հետազոտությունների ինստիտուտում գործող խորհրդի գիտական քարտուղարը: Գիտական քարտուղարի պաշտանում Պավել Չորանյանի արգասարբը գիտակալմակերպչական գործունեության շնորհիվ մեր ինստիտուտի գիտական խորհրդում 8 տարիների ընթացքում պաշտպանվել է քաղաքագիտության բնագավառի 74 քեկեաճուական և 7 զեկուլցարական ասեևախոսություններ:

Այսպիսով մենք կարող ենք վկայել, որ քաղաքական գիտության ազգային զարթոյցի կայացման գործում պրոֆեսոր Պափէ Աշոտի Զորանյանի ներդրումը հիրավի հույժ կարեւոր է: Օգտօվելով առիթից՝ ուզում եմ Պափէ Զորանյանի այստեղ ներկա հարազատներին ու մանրիմներին հայանել մեր խորին հարգանքն ու երախտագիտութիւնը, որոնք մենք տածում ենք մեր փայլուն զործընկերոջ նկատմամբ՝ անվտանգային քաղաքագիտութեան ուսումնական ուղղմամբ: Կետազոտութիւնների ազգային զարթոյցի ձեւափորման գործում նրա ծանրակշիռ մասնակցութեան համար:

Վերջում, թույլ ամէք շնորհակալութիւն հայտնել Հայաստանի Գրտութիւնների ազգային ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի ղեկավարութեանը, նրա տնօրէն ակադեմիկոս Ռուբէն Մաֆրատտյանին՝ Հարավային Կովկասի անվտանգութեան ուղղմամբ արական պատմաքաղաքագիտական պրոբլեմների ուսումնական մասնագիտացած հայտնի արեւելագետ, մեծարգո Պափէ Աշոտի Զորանյանի հիշատակին նվիրված սույն գիտածոզօվք կազմակերպելու համար:

ԳԱՄԱՈՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՔԵԶ* *Քաները Երևանի համալսարանի (Երևան)*
ՔԶԱ *Քաները Հայաստանի արխիվների (Երևան)*
ՀԶԳ *ՀՀ ԳԱԱ կրթերը հասարակական գիտությունների (Երևան)*
ՀԱ *Հանգէս ամսօրեայ (Վրեննա-Երևան)*
ՀՀ ԱԱ *Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվ (Երևան)*
ՀՀԵՏԲ *Հայաստանի եւ հարակից շրջանների տեղաձուլումների բառարան, հտ. 1-5 (Երևան)*
ՀՉՀ *Հայկական սովետական հանրագիտարան (Երևան)*
ՄՄԱԵԺ *Մերձասոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ (Երևան)*
ՊՔԶ *Պատմա-բանասիրական հանգէս (Երևան)*
ВЛА *Вестник архивов Армении (Ереван)*
ВВ *Византийский вестник (СПб., Москва)*
ВДИ *Вестник древней истории (Москва)*
ВЕУ *Вестник Ереванского университета (Ереван)*
ВН *Вопросы истории (Москва)*
ВОН *Вестник общественных наук АН (Ереван)*
ИФЖ *Историко-филологический журнал (Ереван)*
МИА *Материалы по истории Азербайджана (Баку)*
ММ *Материалы из Маштоца*
ПС *Палестинский сборник (Ленинград, СПб.)*
СА *Советская археология (Москва)*
СМОМГИК *Сборник материалов для описания местностей и племен Кавказа (Тифлис)*
XB *Христианский Восток (СПб.)*
BZ *Byzantinische Zeitschrift (München)*
PO *Patrologia Orientalis (Paris)*
REArm. *Revue des Études Arméniennes (Paris)*
REB *Revue des Études Byzantines (Paris)*

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Չորանյան Գայկանուշ - Խոսք գիտնական-հայրիկի մասին	4
Ավետիսյան Թագուհի, Գովհաննիսյան Լարել - Թռչնաբանդակը հայկական միջնադարյան եկեղեցիների բնրակների հարդարանքում	8
Айвазян Григорий - К вопросу о дезинтеграции и деэтнизации удинского народа	17
Բաղարյան Սարգիս - Մի ֆրանսիացի դեպան Երեանում. Պիեռ Վիլտոր Միշլեի անտիպ հուշագրությունն ու հայերը	31
Բոզոյան Ազատ - Կոստանդնուպոլի պատրիարքության սկզբնավորումը Գալոց եկեղեցու եվրոպայեռական համակարգում	32
Գալստյան Վարդան - Աղբրեջանի ժողովրդագրական իրական պատկերի վերհանման փորձ՝ աղբրեջանական պաշտոնական տվյալների հիման վրա	42
Գափրիկոզավիի Խաթունա, Խոսիտաշվիի Իրմա - Կոստանի Ձեռագրերի ազգային կենտրոնի թվագրված հայերեն Ավետարանները	48
Դալաբեան Տորո - Մազբուրների ծագման և տեղորոշման խնդիրները	50
Չարդարյան Սկրտիչ, Ենգիբարյան Լորա, Սարգսյան Գամետ - Սյունիք-Արցախի առևտրային ուղիները որպես Գայաստանի և Մերձավոր Արևելքի ճանապարհագիտության հետազոտման ծրագր	55
Թարումեան (Գակոբյան) Ռուբեն - Գալոց այբուբենի 6 տառի ծագումը 66 ժամկետյան Աղավնի - Ախթամիր (Ոսկեվագ) գյուղական միջնադարում	73
Խորիկյան Գովհաննես - Մասական Իրանի բրիտանյանները մինչև Ե դարը	85
Կարապետեան Սեբուհան - Տակոբ Գրիգորենց մատենագիր (1639-?)	91
Կոստիկյան Ջրիստինե - Աղվանից կարողությունության Ներքին խնդիրներն ըստ Մատենադարանի ԺԸ դարի պարսկերեն վավերագրերի	114
Գակոբյան Չարուհի - Բրդածորի մեծ կթողի պատկերագրական շարքը	122
Գակոբյան Լյուրա - Լորահայտ քուրվառ Անիից	130
Գակոբյան Վահագն - Մատենադարանի պարսկաեզու վավերագրերը որպես Էջմիածնի վանական հողատիրության պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուր	138

Амбарян Гагик – Деятельность международных террористических организаций в Азербайджане	141
Քոլվեմիյան Վահե – Կովկասի փոխարքայության ձեւավորումը եւ վարչատարածքային բաժանումների հիմնախելիքը 1844-1849 թթ.....	151
Казарян Геворг – Сведения Кирилла Скифопольского об армянских монахах Палестины V-VI вв.	153
Ղազարյան Էլինա – Հայկական բնակավայրերն ցտղ Համրայլաի Ղազվիկիի «Լուզիաթ ալ-դուլուր» աշխատության	162
Гуцян Лусине – Иерусалим. Время и место	178
Մաթեոսյան Արթուր – Հայոց եկեղեցու վարդապետական աստվածաբանության հիմնադրույթները սուրբ Գրիգոր Տաթեւացու «Ոսկեկորիկում».....	181
Մախյան Բենիամին – Կրասնոդարի երկրամասի հայերը. Պատմամշակութային եւ ժողովրդագրական ակնարկ	189
Մալոյան Արման – Եւրոպացի ուղեգիրների տեղեկությունները Սարդիկի մասին (ԺԸ դարի վերջին բառուղղ - ԺԹ դարի սկիզբ)	195
Մարգարյան Հայրապետ – Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Տուղայեցու դեղերումները Կրասնոստում	202
Մեյլոնյան Անի – Աղբրեջնական մամուլի անդրադարձը Տուղայի խաչքարերի ոչնչացմանը	207
Միրզաբեկյան Գեորգի – Մակուի նահիեն (գյուղախումբը) 1728 թ. օսմանյան հարկամատյանում	218
Մխիթարյան Գոհար – Աստրախանի հայկական համայնքը Սամուիլ Գւնլինի «Ուղեգրության» մեջ	224
Մուրադյան Գուրգեն, Մնացականյան Նանե – Միաբեկության տարածման միտումները եւ կանխարգելման ուղիները Հարավային Կովկասում	234
Ցակոբեան Ալեքսան – Աշխարհացոյցեան Փայտակարան նահանգի գաւառների տեղորոշման նոր փորձ	236
Պողոսյան Արամ – Մուղոլների նվաճողական ռազմավարությունը Կովկասյան տարածաշրջանում	247
Рапава Майя – Об идентификации Амелакоса в армянских переводах произведений Прокла Диадоха и Аристотеля	249
Մարգարյան Գագիկ, Ենգիթարյան Նորա – Արցախի Կարլառ բաղաբի երկարեղայան դակրարանները	250

Միմոնյան Գալոբ - Աղցքի Գայոց արքաների հուշահամալիրի վաղ միջնադարյան կոթողները	256
Ստեփանյան Խաչատուր - Գայդար Բամառը եւ Գայկական հարցը	266
Փաշայան Արաքս - Կահարականությունն Ադրբեջանում. արտաքին կրթական ազդեցությունների դերը ևոր ինքնությունների ծեապիրան հարցում (1991-2008 թթ.).....	269
Քոթանջյան Գայկ - Պալել Չոբանյանի մասին (Ցիչատակի խոսք).....	278
Գամառուազրությունների ցանկ	281
Բովանդակություն	282
Contents	285

CONTENTS

Chobanyan Haykanush – In memory a scientist and father	4
Avetisyan Taguhi, Hovhannisyan Narek – Bird sculptures in the decoration of the medieval Armenian church drums	8
Ayvazyan Grigori – On disintegration and deethnization of Udi people	17
Baldaryan Sargis – A French Ambassador in Yerevan: The Armenians and the unpublished Memoirs of Pierre-Victor Michel.....	31
Bozoyan Azat – The Constantinople Patriarchate in the Hierarchy of the Armenian Church.....	32
Galstyan Vardan – An attempt of clarification of the true demographical picture of Azerbaijan based on the official stastics.....	42
Gaprindashvili Khatuna, Khositashvili Irma – Dated Armenian Four Gospels at Georgian National Centre of Manuscripts	48
Dalalyan Tork – Problems of the origin and the localization of Maskouts	50
Zardaryan Mkrtich, Yengibaryan Nora, Sargsyan Hamlet – The trade network of Syunik-Artsakh as a modulus for explorations in Roadology of the Near East	55
Tarumyan (Hakobyan) Ruben – The Origin of the letter & of the Armenian alphabet.....	66
Zhamkochyan Aghavni – The village of Akhtamir (Voskevaz) in medieval era.....	73
Khorikyan Hovhannes – The Christians of Iran until the 5th century AD	85
Karapetyan Meruzhan – Jacob Grigorents, an author (1639- ⁿ).....	91
Kostikyan Kristine – The internal issues of the catholicosate of Aluank according to the Persian documents of the 18th century.....	114
Hakobyan Zaruhi – The iconographical program of the Big Stela from Brdadzor	122
Hakobyan Nyura – A new thurible from Ani.....	130

Hakobyan Vahagn – The Persian documents of Matenadaran as sources for History of Etchmiadzin's monastic ownership of land.....	138
Hambaryan Gagik – The activities of international terrorist organizations in Azerbaijan.....	141
Hovsepian Vahe – Formation of the Caucasian Vicegerency and the problem of administrative-territorial divisions in 1844-1849.....	151
Ghazaryan Gevorg – The testimonies of Cyril of Scythopolis regarding the Armenian monks of Palestine in V-VI cc. AD.....	153
Ghazaryan Elina – Armenian settlements by Nuzhat al-qulub of Hamdallah Qazwini.....	162
Ghushchyan Lusine – Jerusalem. Place and time.....	178
Matevosyan Artur – The fundamental principles of the doctrinal theology of the Armenian church in «The Golden Belly» by Saint Grigor Tatevatsi.....	181
Mailyan Beniamin – The Armenians of the Krasnodar Region. A historical, cultural, and demographic review.....	189
Maloyan Arman – The travel notes of european travelers about Mardin (the last quarter of the 18th - the beginning of the 19th century) ...	195
Margaryan Hayrapet – The wanderings of Armenian Catholicos Jacob IV of Jugha in Georgia.....	202
Melikonyan Ani – Azerbaijani media on the destruction of Jugha cross-stones.....	207
Mirzabekyan Georgi – The Maku nahie in the Ottoman Qanun-name of 1728.....	218
Mkhitaryan Gohar – The Armenian community of Astrakhan in the Traveller's account of Samuel Gmelin.....	224
Muradyan Guren, Mnatsakanyan Nane – Trends in the spread of terrorism and methods of prevention in the South Caucasus.....	234
Hakobyan Aleksan – A new attempt of localization of the cantons of Paytakaran province of "Ashkharatsuyts".....	236
Poghosyan Aram – The strategy of Mongol conquest in the Caucasus.....	247

Rapava Maya – On the identification of Amelakhos in the Armenian translations of the works of Aristotle and Proclus Lycaeus	249
Sargsyan Gagik, Yengibaryan Nora – The Iron age graveyards of Karkar	250
Simonyan Hakob – The early medieval monuments of the Aghtsk memorial complex of the Armenian kings	256
Stepanyan Khachatur – Haydar Bamat and the Armenian Question	266
Pashayan Araks – Wahhabism in Azerbaijan: the role of external religious influences in the formation of new identities (1991-2008)	269
Kotanyan Hayk – About Pavel Chobanyan.....	278
Abbreviations list	281
Contents (<i>Arm., Rus.</i>)	282
Contents (<i>Engl.</i>)	285

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՐԵՎԵԼԱԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ. 9**

Հանրապետական գիտաժողով

Երևան, 17-18 մայիսի, 2018 թ.

**ՉԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՉԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ
ԴՐՈՒՅԹՆԵՐ**

ՀՀ ԳԱՆ հրատարակչություն, 2018

Երևան

<i>Հրատ. խմբագիր</i>	<i>Ա. Հակոբյան</i>
<i>Համակարգչային ձևափոխում</i>	<i>Վ. Ղազարյան</i>
<i>Կազմի ձևափոխում</i>	<i>Ա. Ավետիսյան</i>
<i>Սրբագրիչներ</i>	<i>Է. Գևորգյան</i>
	<i>Վ. Ղազարյան</i>

Հրատ. պատվեր N^o 905

Հանձնված է արտադրության՝ 10. 12. 2018 թ.:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Մագալը՝ 18,0 մաժուր:

Տպաքանակը՝ 150 օրինակ:

*ՀՀ ԳԱՆ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երևան, Մարշալ Բազրամյան 24*

[2500#]

ՀԱՅ ԳԻՆՆԱԿԱՅ ԳԻՄ. ԳՐԱԿ.



FL0548377

A \bar{N}
181401

ISBN 978-5-8080-1367-4



9 785808 013674